## Դ. Ղարաբաղի թեմ.

1. Գանձակի նահանգի Շուշի քաղաքը *ունի* 4 *եկ.* 1 *կուսանաց վանք,* 1 *վարդապետ, կոյս* 5, 11 *քահանայ,* 10487 *ար. ծխ. և* 9766 *իգ. ծխ. բոլորը* 20253 *ծխ. արականը աւելի է իգականից* 721-*ով։* 4 *եկեղեցին միասին ունեն դրամագլուխ* 13649 *ռ.* 63 *կոպ. մուտք տարեկան անշարժ կայքերից՝* 4538 *ռ.* 47 *կոպ. ելք՝* 4379 *ռ.* 45 *կոպ.։ Քաղաքում կայ մի թեմական դպրոց՝* 13 *ուսուցչով և* 246 *աշակերտներով,* 4 *հատ ծխ. դպ.* 17 *ուսուցչով և* 600 *սովորողներով, որից* 335-*ը տղայ և* 265 *աղջիկ։*

2. Շուշի, Ջիւանշիր եւ Ջիբրայիլ 173 հայաբնակ գիւղերում— 163 *եկեղ. (եկեղեցի չունեն հետևեալ գիւղերը* 1) *Գիւնոտ,* 2) *Թուքնակալ,* 3) *Բիլբիլակ,* 4) *Մելիքջանլու,* 5) *Ախէշշէկ,* 6) *Թմուգլու,* 7) *Դաստակերտ,* 8) *Գաղթութ,* 9) *Խորուզլու,* 10) *Հարամանլու)։* 137 *քահանայ, (քահանայ չունեն* 36 *գիւղ),* 84964 *ար. ծխ. և* 60138 *իգ. ծխ. բոլորը* 145112 *ծխ. ալակ. իգականից աւելի է* 24836-*ով.* 163 *եկեղ. դրամագլուխն է* 2692 *ռ.* 91 *կ. մուտքը* 3306 *ռ.* 76 *կոպ. ելքը* 2932 *ռ.* 83 *կ.։* 173 *գիւղում կայ* 42 *ծխական դպրոց, ուսուցիչ* 50, *որից* 7՝ *վարժուհի (կին),* 2254 *տղայ սովորող և* 502 *աղջիկ սովորող, բոլորը* 2756 *սովորող։*

3. Նուխի քաղաքը *ունի* 2 *եկեղ.* 1 *վանք,* 1 *վարդապետ,* 4 *քահանայ,* 1912 *ար. և* 1869 *իգ. ծխ. բոլորը* 3781 *ծխական. արականը աւելի է իգականից* 43-*ով։* 2 *եկ. դրամագլուխն է* 1968 *ռ.* 34 *կ. մուտքը* 1497 *ռ.* 36 *կոպ. ելքը* 1240 *ռ.* 5 *կոպ.։ Քաղաքը ունի* 1 *ծխ. դպրոց՝* 5 *ուսուցչով և* 327 *աշակերտով, որից* 124 *տղայ, իսկ* 203 *աղջիկ։*

4. Նուխի գաւառի 51 հայաբնակ գիւղում—52 *եկեղ.* 2 *վանք (չունեն եկեղեցի* 1) *Ջալուտ,* 2) *Ջեյլան)* 35 *քահանայ* (16 *գիւղում քահանայ չկայ),* 20551 *ար. ծխ. և* 17000 *իգ. ծխ. բոլորը* 37551 *ծխական. արականը աւելի է իգականից* 3551-*ով։* 52 *եկեղեցու դրամագլուխն է* 17933 *ռ.* 23 *կոպ. մուտքը՝* 7860 *ռ.* 36 *կոպ. ելքը՝* 10065 *ռ.* 67 *կոպ.։* 51 *գիւղում կայ միայն* 5 *ծխական դպրոց* 16 *ուսուցչով, որից* 5 *վարժուհի,* 364 *տղայ սովորող և* 116 *աղ. սով. բոլորը* 480 *սովորող։*

5. Լենքորան քաղաքում—1 *եկեղ.* 1 *քահ.* 44 *ար. ծխ. և* 27 *իգ. ծխ. բոլորը* 71 *ծխական. եկեղեցին ունի դրամագլուխ* 508 *ռ. մուտք՝* 308 *ռ.* 17 *կոպ. ելք՝* 321 *ռ.* 99 *կոպ։ Դպրոց չունի։*

## *Ամբողջ Ղարաբաղի թեմում.*

*Այստեղ ուրեմն․ քաղաքային եկեղեցիների թիւն է* 7, *գիւղական՝* 215․ *բոլորը* 222 *եկ․ քաղաքային քահ․ թիւն է* 16, *գիւղական* 172․ *բոլորը* 188 *քահ․։ Քաղաքաբնակ ծխականների թիւն է* 12443 *ար․ ծխ․ և* 11662 *իգ․ ծխ․ բոլորը* 24105 *ծխ․ արականը շատ է իգականից* 781-*ով։ Գիւղաբնակ ծխ․ թիւն է ար․* 105525 *ծխ․ իգ․* 77138 *ծխ․ բոլորը* 182663 *ծխ․ արականը շատ է իգականից* 28377-*ով։ Երկուսը միասին ար․* 117968, *իգ․* 88800, *բոլորը* 206768 *ծխ․ արականը շատ է իգականից* 29168-*ով։ Ղարաբաղի թեմում կայ երեք քաղաք* 1․ *Շուշի,* 2․ *Նուխի,* 3․ *Լենքարոն․ իսկ ամբողջ թեմում գտնւող հայաբնակ գիւղերի թիւն է* 224։ *Քաղաքային իւրաքանչիւր եկեղեցուն միջին թւով ընկնում է* 3443 *ծխ․ իսկ իւրաքանչիւր քաղաքի քահանայ ունի միջին թւով* 1506 *ծխական․։ Գիւղական իւրաքանչիւր եկեղեցուն ընկնում է* 849 *ծխ․ իսկ մի քահանային՝* 1062 *ծխ․։ Ընդհանրապէս մի եկեղեցուն ընկնում է* 993 *ծխ․ իսկ մի քահանային՝* 1099 *ծխ․։ Քաղաքային* 7 *եկեղ․ դրամագլուխն է* 16125 *ռ․* 97 *կոպ․ տարեկան մուտքը անշարժ կայքերից* 6344 *ռ․ ելքը* 5941 *ռ․* 49 *կոպ․։ Մի եկեղեցուն միջին թւով ընկնում է դրամագլուխ* 2303 *ռ․* 71 *կոպ․ մուտք* 906 *ռ․* 28 *կ․ ելք* 848 *ռ․* 78 *կոպ․։ Գիւղական* 215 *եկեղեցիների դրամագլուխն է* 20626 *ռ․* 14 *կոպ․ մուտքը անշարժ կայքերից* 11167 *ռ․* 12 *կոպ․ ելքը* 12998 *ռ․* 50 *կոպ․։ Միջին թւով մի եկեղեցուն ընկնում է դրամագլուխ* 95 *ռ․* 93 *կոպ․ մուտք* 51 *ռ․* 94 *կոպ․ ելք* 60 *ռ․* 46 *կոպ․։ Թէ՛ քաղաքային* (7) *և թէ՛ գիւղական* (215) *եկեղեցիների* (222) *դրամագլուխն է* 36752 *ռ․* 11 *կ․ մուտքը անշարժ կայքերից* 17511 *ռ․* 12 *կ․ ելքը* 18939 *ռ․* 99 *կոպ․։ Միջին թւով մի եկեղեցուն ընկնում է դրամագլուխ* 165 *ռ․* 51 *կոպ․ մուտք* 78 *ռ․* 88 *կ․ ելք* 85 *ռ․* 31 *կոպ․։ Ղարաբաղի թեմում կայ* 4 *վանք,* 2 *վարդապետ։ Քաղաքային ծխ․ դպրոց* 5 *հատ՝* 22 *ուսուցչով և* 927 *սովորողներով, որից* 389 *տղայ, իսկ* 538 *աղջիկ։ Գիւղական ծխական դպրոց* 47՝ 66 *ուսուցչով և* 3236 *սովորողներով, որից* 2618 *տղայ, իսկ* 618 *աղջիկ։ Թեմը ունի մի թեմական դպրոց,* 13 *ուսուցիչ և* 246 *աշակերտ։*

Մ. Մինասեան